Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն
Նայիրի Մասնաճիւղ - Ryde NSW

Թումանեան Դպրոց

Վարքի կառավարման կանոնագիր

Վերանայում 1, Սեպտեմբեր 2019

Հայերէն լեզուով առաջին հրատարակիւթիւն, Սեպտեմբեր 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ընդհանուր դրոյթներ 3

1.1 Ներածութիւն 3

1.2 Մեր դաւանանքը 3

1.3 Մեր նպատակները 3

2. Դպրոցի ստանձնած վարքի կառավարման գործառոյթները 4

2.1 Կանխարգելում 4

2.2 Ուղղիչ միջոցներ 4

2.3 Աջակցութիւն 4

3. Իրաւունքներ, պարտաւորութիւններ, կանոններ եւ սահմանուած կարգ 5

3.1 Իրաւունքներ 5

3.2 Պարտաւորութիւններ 5

3.3 Սահմանուած կարգ 6

3.4 Կանոններ 6

4. Հետեւանքներ 7

5. Անպատշաճ վարք 8

5.1 Ֆիզիկական յարձակում 8

5.2 Անպատշաճ միջանձնային վարք 8

5.3 Սեփականութեան հետ կապւած խնդիրներ 9

5.4 Թմրանիւթերի օգտագործում 9

6. Վարքի կառավարման նախագծեր 10

1. Ընդհանուր դրոյթներ

1.1 Ներածութիւն

Սոյն Վարքի կառավարման կանոնագրի նպատակն է խրախուսել դրական աշխատանքային յարաբերութիւնների զարգացումը եւ պահպանումը դպրոցի համայնքի բոլոր անդամների միջեւ՝ որպէս դպրոցի կեանքի բոլոր ասպարէզների անբաժանելի մաս:

1.2 Մեր դաւանանքը

Թումանեան դպրոցում մենք դաւանում ենք հետեւեալ սկզբունքներին.

1. Դպրոցի բոլոր անդամները պէտք է գնահատւեն եւ վայելեն յարգալից վերաբերմունք:
2. Բոլոր անդամներն ունեն իրաւունքներ եւ կրում են պատասխանատուութիւն իրենց վարքի համար:
3. Բարձր ինքնագնահատականը կարեւոր գործօն է անհատի դրական զարգացման գործում:
4. Դպրոցը որդեգրում է խնամքի եւ հոգատարութեան պարտաւորութիւն թէ՛ աշխատակազմի եւ թէ՛ աշակերտների հանդէպ:
5. Դրական յարաբերութիւնները նպաստում են ապահով, ներդաշնակ եւ համագործակցող աշխատանքային միջավայրի ստեղծմանը:
6. Դպրոցի ստանձնած վարքի կառավարման գործառոյթները պէտք է լինեն իմաստալից եւ հետեւողական:
7. Վարքի կառավարումը դպրոցի ողջ համայնքի պարտաւորութիւնն է:

1.3 Մեր նպատակները

Թումանեան դպրոցում մեր նպատակներն են.

1. Ապահովել դպրոցի բոլոր անդամների հանդէպ գնահատանքն ու յարգալից վերաբերմունքը:
2. Ապահովել բոլոր անդամների իրաւունքների պահպանումը:
3. Խրախուսել բոլոր անդամներին կրելու պատասխանատուութիւն իրենց արարքների համար եւ գործել համապատասխանաբար:
4. Բարձրացնել անհատի ինքնագնահատականը դրական գործելակերպի միջոցով:
5. Ցուցաբերել աջակցութիւն բոլոր անհատներին:
6. Շարունակաբար զարգացնել եւ է՛լ աւելի բարելաւել դպրոցում հաստատուած ապահով, ներդաշնակ եւ համագործակցող աշխատանքային միջավայրը:
7. Ապահովել դպրոցի ստանձնած վարքի կառավարման գործառոյթների իմաստալից եւ հետեւողական կիրառումը դպրոցի ողջ համայնքում:

2. Դպրոցի ստանձնած վարքի կառավարման գործառոյթները

Սոյն կանոնագրի նպատակն է ներկայացնել անընդունելի վարքի կանխարգելման, շտկման եւ համապատասխանաբար անհատներին անհրաժեշտ աջակցութիւն ցուցաբերելու ընթացակարգը՝ դպրոցի վերոշարադրեալ նպատակներն իրագործելու համար:

2.1 Կանխարգելում

Կանխարգելումը ներառում է դրականի կառուցումը եւ խուսափումը բացասականից՝ իրաւունքների եւ պարտաւորութիւնների մասին տեղեկացման, ինչպէս նաեւ օրէնքների եւ սահմանուած կարգի հաստատման միջոցով:

Ստանձնած գործառոյթներն են.

- Ուսուցիչների կողմից՝ համընդհանուր օրէնքների, կանոնների եւ պարտաւորութիւնների բացատրութիւն աշակերտներին՝ «դասարանի կառավարման» մակարդակում
- Դպրոցում վարքի կառավարման հիմքում ընկած է «իրաւունքներ-պարտաւորութիւններ-կանոններ-սահմանուած կարգ» կանոնակարգը:
- Շարունակաբար ուսուցանել, դրւատել եւ քաջալերել դրական վարքը դպրոցում:

2.2 Ուղղիչ միջոցներ

Ուղղիչ միջոցները ներառում են բացասական վարքն ուղղելու նպատակով համապատասխան հետեւանքների կիրառում՝ անյապաղ կամ որոշ ժամանակ անց:

Ստանձնած գործառոյթներն են.

- Անհարկի առճակատումը հասցնել նւազագոյնի
- Կիրառել հնարաւորինս դրական բնոյթի ուղղիչ միջոցներ
- Կենտրոնանալ առաջնային վարքի վրայ՝ խուսափելով վիճաբանութիւններից
- Ներշնչել, ցուցաբերել եւ ակնկալել յարգանք
- Գործադրել տեղին եւ ողջամիտ հետեւանքներ
- Գալ համաձայնութեան, որպէս համադպրոցական գործառոյթ, աշակերտին «հանգստանալու ժամանակ» (“time-out”) տալու վերաբերեալ:

2.3 Աջակցութիւն

Աջակցութիւնը ներառում է օժանդակութիւն աշխատակազմին, աշակերտներին եւ ծնողներին՝ յետադարձ կապի, ինչպէս նաեւ յարաբերութիւնների վերանորոգման եւ վերակառուցման միջոցով:

Ստանձնած գործառոյթներն են.

- Կառուցել, քաջալերել եւ կիրառել միասնական մօտեցում վարքի կառավարման հարցում

Ստորեւ բերւած երեք կէտերը փոխկապակցւած են եւ հանդիսանում են վարքի բարելաւման հիմնական գործոնները.

- Հետեւողականութիւն
- Յստակ կանոններ
- Արդարացի վերաբերմունք

3. Իրաւունքներ, պարտաւորութիւններ, կանոններ եւ սահմանուած կարգ

Դպրոցի ողջ տիրոյթում, վարքի կառավարման հարցում հետեւողական եւ յստակ մօտեցումը պայմանաւորուած է դպրոցի համայնքի բոլոր անդամների կողմից իրենց իրաւունքների եւ պարտաւորութիւնների յստակ ըմբռնմամբ, ինչպէս նաեւ համադպրոցական կանոնների եւ սահմանուած կարգի հաստատմամբ:

Դասարանում իրաւունքների, պարտաւորութիւնների, կանոնների եւ սահմանուած կարգի հաստատման եւ պահպանման հենքը ապահովում է վարքի կառավարման հարցում հետեւողական եւ յստակ մօտեցումներ, ինչը թոյլ է տալիս ուսուցչին եւ աշակերտներին հաշուի առնել իւրայատուկ դասարանային իրավիճակը եւ մշակել իրենց սեփական «դասարանի կառավարման նախագիծը» դպրոցի համատեքստում:

3.1 Իրաւունքներ

Ցանկացած անհատ ունի իրաւունքներ:

Թումանեան դպրոցում իւրաքանչիւր անդամ ունի իր իրաւունքները:

Աշակերտների իրաւունքներն են.

- Դպրոցի տարածքում զգալ ապահով
- Սովորել՝ լաւագոյնս օգտագործելով իրենց ունակութիւնները
- Վայելել յարգալից վերաբերմունք

Աշխատակազմի իրաւունքներն են.

- Դպրոցի տարածքում զգալ ապահով
- Ունենալ հնարաւորութիւն դասաւանդելու
- Վայելել յարգալից վերաբերմունք

Ծնողների իրաւունքներն են.

- Դպրոցում վայելել բարեացակամ վերաբերմունք
- Մասնակից լինել իրենց երեխաների կրթութեանը
- Վայելել յարգալից վերաբերմունք

3.2 Պարտաւորութիւններ

Պարտաւորութիւնը իրաւապէս եւ բարոյապէս պատասխանատու լինելն է պարտականութիւնների կատարման եւ խնամքի ցուցաբերման հարցերում:

Թումանեան դպրոցում ամեն ոք ունի իր պարտաւորութիւնները:

Աշակերտների, աշխատակազմի եւ ծնողների պարտաւորութիւնները, որպէս դպրոցի մէկ միասնական համայնքի անդամներ, կայանում են միմեանց իրաւունքները յարգելու մէջ:

3.3 Սահմանուած կարգ

Կանոններին հետեւելը դիւրին դարձնելու նպատակով, դպրոցը սահմանել է կայուն ընթացակարգ՝ հիմնուած դպրոցի որդեգրած սկզբունքների եւ ակնկալիքների վրայ:

3.4 Կանոններ

Կանոններն այն յայտարարութիւններն են, որոնք սահմանում են, թէ ինչ է կարելի, անհրաժեշտ կամ պարտադիր անել որոշակի հանգամանքների առկայութեան դէպքում: Իրաւունքների պաշտպանութեան եւ պարտաւորութիւնների ստանձնման համար, դպրոցում գոյութիւն ունեն ներդասարանային եւ արտադասարանային կանոններ:

Թումանեան դպրոցում գործում են հետեւեալ կանոնները բոլորի համար.

1. **Ուսուցչի յանձնարարական աշակերտին**
   - Հետեւիր ուսուցչի ցուցմունքին
2. **Հաղորդակցութեան կանոն**
   - Հաղորդակցւիր քաղաքավարի
3. **Ուսումնառութեան կանոն**
   - Համագործակցիր համադասարանցիներիդ հետ
   - Աշխատիր՝ առանց համադասարանցիներիդ խանգարելու
4. **Շարժւելու կանոն**
   - Շարժւելիս եղիր զգոյշ մշտապէս
5. **Վերաբերւելու կանոն**
   - Վերաբերւիր բոլորին հանդարտ, առանց ֆիզիկական միջամտութեան
6. **Ապահովութեան կանոն**
   - Դասասենեակից դուրս կօշիկները միշտ պէտք է լինեն հագին
7. **Ընդհարման կանոն**
   - Կիրառիր խնդիրների խաղաղ լուծման մարտավարութիւն
   - Դիմիր ուսուցչին, եթէ դժւարանում ես ինքնուրոյն լուծել խնդիրը
8. **Սեփականութեան կանոն**
   - Հետեւիր, որ իրերդ լինեն իրենց տեղում
   - Յարգիր ուրիշների սեփականութիւնը
9. **Խաղալու կանոն**
   - Խաղայ միայն խաղի համար յատկացւած տարածքներում

4. Հետեւանքներ

«Վատ վարքի հետեւանքները պէտք է լինեն այն ուղղիչ միջոցը, որը հանդիսանում է կապող օղակ իրաւունքների եւ կանոնների միջեւ, երբ աշակերտները խախտում են ուրիշների իրաւունքները»:

Բիլ Ռոջերս, Վարքի կառավարում, էջ 90

Երեխաները սովորում են, որ իրենց գործողութիւններն ունեն հետեւանքներ, եւ որ իրենց վարքն իրենց իսկ ընտրութիւն է:

Թէ՛ պատշաճ, թէ՛ անպատշաճ վարքը պէտք է ունենայ հետեւանք, որի մասին աշակերտը պէտք է տեղեակ լինի եւ համապատասխանաբար նկատի ունենայ որոշակի վարք ընտրելուց առաջ:

Հետեւանքները պէտք է լինեն.

- Աշակերտի իրաւունքները հաշւի առնող
- Խնդրոյ առարկայ վարքի հետ անմիջական կապ ունեցող
- Ողջամիտ
- Անհատի արժանապատուութիւնը չոտնահարող
- Համապատասխան աստիճանի լրջութեան

Հետեւանքն արդիւնաւէտ է, եթէ կայ հաւաստիութիւն, որ այն կը գործադրուի անյապաղ կամ որոշ ժամանակ անց: Հետեւանքները եւ դրանց հետամուտ լինելը պէտք է ի կատար ածւեն այն ուսուցչի կողմից, ով անդրադարձել է աշակերտին՝ վերջինիս վարքի կապակցութեամբ, եւ ոչ միայն փոխանցել է կատարուածի մասին տեղեկութիւն դասարանի ուսուցչին:

Տրամաբանական հետեւանքների օրինակներ են.

- Եթէ հրել ես շարքում կանգնածին՝ առաջ անցնելու նպատակով, կը կանգնես շարքի վերջում:
- Եթէ թողել ես իրերդ թափւած անպատեհ վայրում, դրանք ժամանակաւոր կը դրւեն պահեստում:
- Եթէ դասաժամի առաջադրանքը չես հասցրել կատարել, պէտք է աւարտես տանը՝ որպէս տնային աշխատանք:
- Եթէ անփոյթ ես կատարել աշխատանքդ, ստիպւած ես այն նորից կատարել:
- Եթէ աղտոտել ես շրջակայքդ կամ վնաս ես հասցրել, պէտք է վերականգնես՝ մաքրելով աղտոտածդ կամ վճարելով վերանորոգման համար:
- Եթէ կոտրել կամ փչացրել ես դասընկերոջդ սեփականութիւնը, պարտաւոր ես այն փոխարինել նորով:
- Եթէ անհանգստացրել ես ընկերոջդ, ներողութիւն պէտք է խնդրես, եւ հնարաւոր է՝ զրկւես ընթացիկ միջոցառմանը մասնակցելուց:
- Եթէ անպատշաճ ես շարժւել, վերադարձիր եւ շտկիր շարժուձեւդ:

5. Անպատշաճ վարք

5.1 Ֆիզիկական յարձակում

Ֆիզիկական յարձակումը ներառում է կռուելը, ահաբեկելը, ինքնախեղումը եւ ֆիզիկական ճնշման այլ գործողութիւններ:

Կառավարում

Ուսուցիչը պէտք է՝

- Գնահատի վատ վարքագիծը՝ հաշւի առնելով համատեքստը, ընկերների արձագանքը, գործողութեան յաճախութիւնը, վնասելու մտադրութիւնը, ինքնագիտակցումը, ազդեցութիւնը այլոց վրայ եւ այլն
- Դադարեցնի խնդիր յարուցող գործողութիւնը
- Սատարի տուժող կողմին
- Դիմի բժշկական օգնութեան, եթէ անհրաժեշտ է
- Ընդհարուող կողմերը հեռացնի միմիանցից

Հետեւանքներ

- Մեկուսացում (օրինակ՝ ընթացիկ դասարանում, մէկ այլ դասարանում, ուսուցչանոցում)
- Միմիանցից առանձնացում
- «Ժամանակ տալ հանգստանալու» (“time-out”)
- Որոշ ազատութիւնից կամ արտօնութիւններից զրկում

5.2 Անպատշաճ միջանձնային վարք

Անպատշաճ միջանձնային վարքը ներառում է հայհոյելը, սպառնալը, ծաղրելը, վիճելը, ամբարտաւանութիւնը, անքաղաքավարութիւնը, ընդդիմախօսութիւնը, մերժողականութիւնը եւ այլն:

Կառավարում

Ուսուցիչը պէտք է՝

- Գնահատի վատ վարքագիծը՝ հաշւի առնելով համատեքստը, ընկերների արձագանքը, գործողութեան յաճախութիւնը, վնասելու մտադրութիւնը, ինքնագիտակցումը, ազդեցութիւնը այլոց վրայ եւ այլն
- Դադարեցնի խնդիր յարուցող գործողութիւնը
- Սատարի տուժող կողմին

Հետեւանքներ

- Մեկուսացում (օրինակ՝ ընթացիկ դասարանում, մէկ այլ դասարանում, ուսուցչանոցում)
- Միմիանցից առանձնացում
- «Ժամանակ տալ հանգստանալու» (“time-out”)
- Որոշ ազատութիւնից կամ արտօնութիւններից զրկում

5.3 Սեփականութեան հետ կապված խնդիրներ

Սեփականութեան մէջ են ներառուում դպրոցի, ինչպէս նաեւ դպրոցի համայնքի մէջ ներառուող անհատի անձնական սեփականութիւնները:

Սեփականութեան հետ կապված խնդիրները կարող են լինել.

- Ոչնչացումը, օրինակ՝ դասընկերոջ գրքի պատռում, դպրոցի սեփականութեան վնասում, ջարդում, վանդալիզմ:
- Գոյքի այլանդակումը, օրինակ՝ գրաֆիտի:
- Կոտրելը՝ որպէս անպատշաճ վարքի պատճառով հասցւած վնաս
- Գողութիւնը, օրինակ՝ դրամի, սննդի, սարքի կամ որեւէ այլ սեփականութեան:

Վերը նշւածները ենթադրում են մտադրւած գործողութիւններ՝ դպրոցի կամ անձնական սեփականութիւնը փչացնելու կամ ոչնչացնելու, գիտակցւած վնաս պատճառելու նպատակով:

<u>Կառավարում</u>

- Եթէ դէպքն աննշան է, ուսուցիչներն են որոշում հետեւանքները եւ կիրառում դրանք:
- Նշանակալից դէպքերն ուղղորդւում են դպրոցի տնօրէնին:

<u>Հետեւանքները</u>

- Վնասւած սեփականութեան փոխարինում նորով
- Վերանորոգում
- Դրամական փոխհատուցում
- Մաքրում
- Իրաւական գործառոյթ

Վնասը հասցնողը պարտաւորութիւն է կրում վերանայելու իր վարքը, այդ թւում՝ անհրաժեշտութեան դէպքում ներկայացնելու գրաւոր զղջում:

5.4 Թմրանիւթերի օգտագործում

Ծխախոտի կամ ոգելից խմիչքների օգտագործումը դպրոցի տարածքում խստիւ արգելւած է: Անօրինական նիւթերի օգտագործումն արգելւած է նմանապէս: Նշւած նիւթերից որեւէ մէկի օգտագործումը Թումանեան դպրոցում համարւում է խոշոր չափի օրինախախտում եւ անյապաղ ուղղորդւում է տնօրէնին:

6. Վարքի կառավարման նախագծեր

Վարքի կառավարման նախագծերի դերը վարքի արդիւնաւէտ կառավարման հենք տրամադրելն է:

Վարքի կառավարման նախագծերն են.

- Վարքի կառավարման համադպրոցական նախագիծ
- Դասարանի կառավարման նախագիծ